# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. թիվ 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Համազգեստ, առավելագույնը՝ 100 լրակազմ: 1. Պիլոտկա (կանացի), առավելագույնը՝ 100 հատ (Ձև 4): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի կիսաբրդյա գործվածքից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բաղկացած երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և կենտրոնական մասում իրար վրա ծալվող 2 փեշիկից: Վերծալված եզրակարերը մուգ կարմիր գույնի (2581 արտիկուլի մահուդե կտորից) են և ձախ կողմում ունեն 3 օդանցք: Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-С5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ), իսկ ներսի ժապավենը բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը (կոկարդը), որը պատրաստվում է ոսկեգույն ձուլածո մետաղից՝ 28 X 38 մմ չափսերով, որի մեջտեղում՝ ատամնավոր էլիպսաձև շրջանակի մեջ պատկերված են դատական կարգադրիչների խորհրդանշանի սուրը, վահանը և կշեռքը (Ձև 5): 2. Կիսաշրջազգեստ, առավելագույնը՝ 100 հատ (Ձև 7): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բնական մետաքսե աստառով (8-С5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ), երկարությունը մինչև ծնկները, ունի երկկողմանի սեղմոններ, գոտին՝ գոտեմակօղերով, հետնամասում 15 սմ երկարությամբ փակ բացվածքով, գոտու վրա կարվում է 8 կամրջակ: Կիսաշրջազգեստը հետևի մասում կոճկվում է մեկ կոճակով և ծածկված է կայծակնաճարմանդով: 3. Տաբատ (կանանցի), առավելագույնը՝ 100 հատ (Ձև 7): Պատրաստվում է |

ազատթող փողքերով, մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), ուղիղ է, առանց ծալքերի, ունի բնական մետաքսյա աստառ (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ) և մուգ կարմիր եզրաշերտ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Տաբատի գոտին գոտեմակօղերով է, կոճկվում է ձախ կողմից 2 կոճակով, գրպանները թեք են, ներկարված և ունեն կայծակնաճարմանդ: Տաբատի առջևի մասի յուրաքանչյուր կողմում մշակվում է մեկական սեղմոն՝ արդուկի գծի ուղղությամբ, իսկ ետևի մասի յուրաքանչյուր կողմում՝ երկուական սեղմոն: Տաբատի գոտին ունի 55 մմ լայնություն, գոտու վրա կարվում է 8 կամրջակ, որոնց երկարությունը 55 մմ է, լայնությունը՝ 1,8 սմ, իսկ տաբատի կողքի գրպաններն ունեն 3,5 սմ թեքություն: 4. Կանացի բաճկոն (հանովի կոշտ ուսադիրներով), առավելագույնը՝ 100 հատ (Ձև 7): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բնական մետաքսե աստառով (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ): Բաճկոնը առջևի մասում կոճկվում է կայծակնաճարմանդով, իսկ գոտեմասում՝ 55 սմ լայնքով ու 12-18 սմ երկարությամբ, ներկարված առանձգական ժապավենով: Թիկնամասի, լանջափեշերի կրծքամասով և թևքերի թեզանիքների կտրվածքների միացման տեղերով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ (կանտ) (2581 արտիկուլի մահուդե կտորից): Բաճկոնի վրա ներկարված են կայծակնաճարմանդով կոճկվող 2 կողային գրպան, ծոցագրպաններ, որոնցից ձախը կոճկվող է: Բաճկոնի վրա տեղադրված են հանովի ուսադիրների համար նախատեսված 2-ական ամրակներ: Բաճկոնի օձիքը կանգուն է, մշակված է մեկ կտորից: Բաճկոնի վրա առկա է թևքանշան, որը հանդիսանում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանիշը՝ համազգեստի ձախ թևքին՝ ուսակարից 80 մմ ներքև կարվող 80 X 100 մմ չափսերով: Թևքանշանի ներքևում զետեղված են դափնեճյուղեր, որոնց մեջտեղում պատկերված է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը, վերևում ոսկեգույն (դեղնավուն) տառերով գրված են «ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը Ձև 20-ին համապատասխան: Բաճկոնի աջ թևքին առկա է Հայաստանի Հանրապետության դրոշը (8-6 սմ), ուսակարից 80 մմ ներքև: Բաճկոնը պատրաստվում է կրծքամասում սեղմոններով և կոճկվում է ձախ կողմից: 5. Կանացի փողկապ, առավելագույնը՝ 100 հատ (Ձև 17): Կանացի փողկապ՝ երկթև բանտ, որի թևերն ունեն 10 սմ երկարություն, 4,5 սմ լայնություն, 45 աստիճանի բացվածք: Բանտի մեջտեղում ամրացվում է ոսկեգույն, 1 սմ տրամագծով դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը: 1-5 կետերում ներառված ապրանքները պետք է ունենան միևնույն գունային գամման: 1-ին չափաբաժնով ներկայացված լրակազմը ներառում է 1 հատ պիլոտկա, 1 հատ տաբատ, 1 հատ փողկապ, 1 հատ կիսաշրջազգեստ և 1 հատ բաճկոն: Յուրաքանչյուր անգամ մատակարարվող ապրանքների համար մատակարարը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության

| | |
|---|---|
| | եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը` լրակազմով, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 լրակազմ, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ТЕКСТИЛАРТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | Ниже представленные товары создаются в соответствии с критериями и формами (фотографии), утвержденными постановлением Правительства Республики Армения номер 1517-А от 20.12.2018г. Униформа, максимально 100 комплектов. 1. Пилотка (женская), максимально 100 штук (Форма 4). Изготавливается из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 г/м2), состоит из 2 частей удлиненного донышка, 2 стен и в центральной части из 2 бортиков, сложенных друг на друга. Пересложенные покромочные швы темно-красного цвета (из суконной ткани 2581 артикула) и в левой части имеют 3 отдушины. Подкладка изготавливается из натурального шелка (из 8-С5-ВШ артикула темно синей ткани плотностью 100 г/м2), а внутренняя лента из натуральной кожи шириной 30 мм. В передней центральной части креплется кокарда, которая изготавливается из золотистого литого металла размерами 28 X 38 мм, в середине которой в зубчатом элипсовидном круге изображены меч, щит и весы символа судебных приставов (Форма 5). 2. Юбка, максимально 100 штук (Форма 7). Изготавливается из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 г/м2) с натуральной шелковой подкладкой (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100г/м2), длина до колен, имеет двусторонние вытачки, пояс со шлевками в задней части с закрытым разрезом длиной 15 см, на поясе шьется 8 мостиков. Юбка в задней части застегивается на одну пуговицу и покрыта застежкой-молнией. 3. Брюки (женские), максимально 100 штук (Форма 7). Изготавливается со свободными краями, из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 |

| | |
|---|---|
| | г/м2), прямые, без складок, имеет натуральную шелковую подкладку (из артикула 8-С5-ВШ темно синей ткани плотностью 100г/м2) и темно - красная тесьма (из суконной ткани 2581 артикула). Пояс брюк со шлевками, застегивается с левой стороны на 2 пуговицы, карманы кривые, вшитые и имеют застежку- молнию. В любой стороне передней части брюк разрабатывается по-одной вытачке – по направлению линии утюга, а в любой стороне задней части - по две вытачки. Пояс брюк имеет ширину 55 мм, на поясе шьется 8 мостиков, длина которых 55 мм, ширина 1,8 см, а боковые карманы брюк имеют кривость 3,5 см. 4. Куртка женская (со съемными твердыми погонами), максимально 100 штук (Форма 7). Изготавливается из темно-синей полушерстяной ткани (67% шерсти, 33% полиэстера, плотностью 317 г/м2), с натуральной шелковой подкладкой (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100г/м2). В передней части куртка застегивается на застежку-молнию, а в поясничной части - вшившейся эластической лентой шириной 55 см и длиной 12-18 см. По тыльной стороне, бортам грудной части и по частям соединения разрезов манжетов рукавов проходит темно-красная тесьма (кант) шириной 2,5 мм (из суконной ткани 2581 артикула). На куртке вшиты 2 боковых кармана застегивающихся на застежку-молнию, внутренние карманы, левый из которых застегивается. На куртке расположены по два зажима предусмотренные для съемных погонов. Воротник куртки стоячий, разработан из одной ткани. На куртке имеется шеврон, который является символом службы судебных приставов - на левом рукаве униформы 80 мм ниже плечевого шва сшитый размерами 80 х 100 мм. Внизу шеврона имеются ветки лавра, в середине которых изображен символ службы судебных приставов, наверху золотистыми (желтоватыми) буквами написаны слова «СЛУЖБА СУДЕНЫХ ПРИСТАВОВ» в соответствии с Формой 20. На правом рукаве куртки имеется флаг Республики Армения (8-6 см), 80 мм ниже от плечевого шва. Куртка изготавливается вытачками в грудной части и застегивается с левой стороны. 5. Женский галстук, максимально 100 штук (Форма 17). Женский галстук - двукрыльный бант, крылья которого имеют длину 10 см, ширину 4,5 см, разрез 45 градусов. В середине банта креплется золотистый символ службы судебных приставов диаметром 1 см. Товары, включенные в 1-5 пунктах, должны иметь одинаковую цветовую гамму. Представленный по части 1-го лота комплект включает 1 штуку пилотки, 1 штуку брюк, 1 штуку галстука, 1 штуку юбки и 1 штуку куртки. Каждый раз для поставляемых товаров поставщик должен представить выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности ткани. Упаковка товаров в комплекте, в полиэтиленовых прозрачных пакетах, в одном пакете 1 комплект, на пакетах должны быть отмечены наименования согласно взятым индивидуальным размерам, маркированные, на марках должны быть отмечены наименование, количество, размеры, информация об уходе ассортимента. |